Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 239-Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՇՏԱԲԻ «ԱՅԳ-1» ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի շրջանակում անցկացված նախառակավորման ընթացակարգի արդյունքում նախառակավորված մասնակիցների ցանկը հաստատելու, մրցույթի ընթացակարգի մասնակցության հայտերի ներկայացման հրավերին հավանություն տալու և մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 1986-Ն որոշմամբ սահմանված՝ Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության հետ կապված հիմնական հարաբերությունները:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1986-Ն որոշման 2-րդ կետով հավանության արժանացած՝ Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի մրցույթի ընթացակարգի մասնակցության հայտերի ներկայացման հրավերով սահմանված կարգով և սույն աշխատակարգով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստեր հրավիրելու միջոցով, որոնք իրավազոր են, եթե վերջիններիս մասնակցում է հանձնաժողովի անդամ-ների առնվազն 2/3-ը:

4. Հանձնաժողովի նիստերը նախագահում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի ցուցումով:

5. Հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ է քվեարկել հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է:

6. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը:

7. Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը:

8. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և նախագահում դրանք.

2) սահմանում է հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը.

3) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող անհրաժեշտ փաստաթղթերն ու գրությունները.

4) իրականացնում է սույն աշխատակարգով նախատեսված այլ գործառույթներ:

9. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում է հանձնաժողովի քարտուղարը:

10. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ծանուցում է հանձնաժողովի անդամներին հանձնաժողովի նիստերի մասին, կազմում է արձանագրությունները.

2) ընդունում և գրանցում է նախաորակավորված հայտատուների առաջարկները.

3) ապահովում է արձանագրությունների կազմումը, ընտրության գործընթացի կազմակերպմանն ու անցկացմանն առնչվող բոլոր փաստաթղթերի հավաքագրումը.

4) կատարում է սույն աշխատակարգից բխող՝ հանձնաժողովի նախագահի կողմից իրեն տրված հանձնարարականները:

11. Հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական աջակցություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1986-Ն որոշման 6-րդ կետով սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովին աջակցող խումբը:

12. Հանձնաժողովը կարող է իր աշխատանքներում խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավել նաև համապատասխան այլ մասնագետների, ներառյալ՝ պետական կառավարման մարմիններից, համապատասխան գերատեսչություններից և կազմակերպություններից:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

13. Հանձնաժողովը՝ ըստ Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի հայտերի ներկայացման հրավերում (այսուհետ՝ ՀՆՀ) սահմանված ընթացակարգերի՝

1) ուսումնասիրում է նախառակավորված հայտատուների հարցումները և պարզաբանում դրանք.

2) բացում է նախառակավորված հայտատուների առաջարկները.

3) ուսումնասիրում և գնահատում է նախառակավորված հայտատուների առաջարկները.

4) անհրաժեշտության դեպքում կատարում է հարցումներ նախառակավորված հայտատուներին՝ պարզաբանելու իրենց առաջարկները.

5) նախառակավորված հայտատուներին ծանուցում է տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների մասին և հրավիրում ֆինանսական առաջարկների

բացմանն այն նախառակավորված հայտատուներին, որոնց տեխնիկական առաջարկները բավարարել են ՀՆՀ-ով սահմանված պահանջներին և որոնք որակվել են որպես տեխնիկապես որակավորված.

6) տեխնիկապես որակավորված նախառակավորված հայտատուների ֆինանսական առաջարկների գնահատման արդյունքում որոշում է նախընտրելի հայտատուին.

7) բոլոր տեխնիկական առաջարկների և ֆինանսական առաջարկների գնահատման ավարտից հետո տեխնիկապես որակավորված բոլոր նախառակավորված հայտատուներին դասակարգում է ըստ նախընտրելիության.

8) կարող է իր հայեցողությամբ նախընտրելի հայտատուին հրավիրել բանակցությունների.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի շրջանակում մրցույթի ընթացակարգի արդյունքները հաստատելուց հետո ընտրված հայտատուին (մրցույթի հաղթողին) տրամադրում է ծրագրի շնորհման գրություն.

10) իրականացնում է ՀՆՀ-ով հանձնաժողովին վերապահված այլ գործառույթներ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

14. Հանձնաժողովի աշխատանքները համարվում են ավարտված, և նրա լիազորությունները դադարում են ՀՆՀ-ով հանձնաժողովին վերապահված լիազորությունները սպառելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

11.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ